

06.07.2019թ.

Արմավիրի մարզպետ

պարոն Ն. Մաթևոսյանին

Հասցե՝ ք. Արմավիր, Արովյան 71

Հարգելի պարոն մարզպետ,

Խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1) քանի՞ անձից եք ստացել դիմում, հարցում կամ բողոք www.e-request.am կայքի միջոցով՝ տարեկան կտրվածքով, դրա կիրառման սկզբից մինչև 2019թ. մայիս ամիսը ներառյալ, 2) այդ անձանցից քանիսն են լրագրող, փաստաբան, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություն, 3) ի՞նչ եղանակով է նրանց ուղարկվել պատասխանը. էլեկտրոնային փոստով թե՞ թղթային կրիչով, առձեռն թե՞ փոստային ծառայության միջոցով, 4) ի՞նչ խնդիրներ են առկա www.e-request.am կայքի կիրառման ընթացքում, որոնց լուծումը կայքի կիրառումն ավելի արդյունավետ կդարձնի:

Խնդրում եմ տեղեկությունները տրամադրելիս նշել նաև կին/տղամարդ հարաբերակցությունը և հայցվող տեղեկատվությունը մեր armjur@yahoo.com էլեկտրոնային փոստին ուղարկել մինչև հուլիսի 13-ը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով



Արման Խաչատրյան
«Ժողովրդավարության և իրավունքի
կենտրոն» հասարակական
կազմակերպության նախագահ

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ստեղծվել է
09 07 2019